պատրիարք դարձնելու աշխատեցաւ, որպէսզի այս կերպով հին և նոր պարտքերը միանգամայն կարենան գանձել։

Արդարև՝ Սարգիս բանտէն ելլելով Ադրիանուպոլիս գնաց Եպարքոսին ետեւէն և պատրիարքութեան հրովարտակ առնելով Պոլիս դարձաւ, Յովհաննէսը վտարեց և ինքը տիրացաւ աթոռին (1664 Ապրիլ)։ Սակայն իր պահանջատէրերէն չփրկուեցաւ։ Թէև իր քարոզներէն կ'խորժէր ժողովուրդը և հետզհետէ իր բարեկամները կը շատնային ու օգնութիւններ ալ կ'ըլլային իրեն, սակայն իր պարտքերը շատ էին, ծանր տոկոսներով։ Ան յաճախ ստիպուած էր կերակրել իր պահանջատէրերը, որոնք կու գային մնալ իր տունը, ծառաներով և ձիերով միասին։ Եթէ պաշտօնի վրայ մնար, թերեւս կարենար այս տխուր վիճակէն փրկուիլ, սակայն պարագաները աննպաստ ձեւով մը դասաւորուեցան իր դէմ։

Յովհաննէս Թիւթիւնճի, պատրիարքութենէ իյնալէն ետքը, Թըլթըլեանները իրենց գլխաւորներէն երկու հոգիի պաշտօն տուին Պելկրատ երթալ մեծ Եպարքոսին ետեւէն, զայն կաշառելու և Սարգիս Թէքիրտաղցին տապալելու համար։ Իրենց պատգամաւորներուն ընկերացուցին նաև Յովհաննէս Թիւթիւնճին, խոստանալով անոր վճարել ինչ ծախք որ երթար իրենց նպատակին իրագործման համար։

Յովհաննէս Թիւթիւնճի Պելկրատ հասնելով՝ հաստատուեցաւ տուն մը, ուր եկան զինքը գտնել արքունի բանակին իբր հայթայթիչ կամ իբր պաշտօնեայ գործող հայ վաճառականներէն և իշխանաւորներէն ոմանք և զինքը մեղադրեցին «բազում բանիւք»։ «Դուն, ըսին, որ այսչափ քրիստոնեաներու դրամը վատնեցիր և պատճառ եղար ժողովուրդին